

ԴՐՈՒԱԳ Դ.

Ա. Թագաւորութիւն Լեւոնի, խնդրելով վերստին թագ ՚ի կայսերէ Ալամանաց

Յետին բանք Սրբոյ Լամբրունեցոյն՝ ժաման արարին զմեզ ՚ի թագաւորութիւն Լեւոնի. եւ հարկ առնեն քննել աստանօր գերբն եւ գորպէսն, յետ տեսանելոյ ցայս վայր՝ փոքր ՚ի շատէ, զհնարս եւ զարդիւնս նորին առ գերագոյն պատիւն եւ փառս, բազում քաջութեամբքն, աշխարհակալութեամբք, պէսպէս քաղաքական հրահանգօք եւ առտնին շինութեամբք: Ժամանակ յոլութեան խորհրդոյ կամ ըղձից թագաւորութեան ՚ի միտս Լեւոնի՝ նմա միայնոյ է գիտելի, իսկ յայտնութիւն՝ որպէս վերագոյնդ նշանակեցաք, երեւի ՚ի շարժման արեւմտեայց գալոյ յ'Գ Խաչակրութիւն. առ որոց գլխաւորն՝ Փրետրիկ կայսրն Ալամանաց, որ եւ ինքնակալ հնոյն Հռովմայ զինքն համբաւէր, կանխեցին ՚ի Լեւոնէ թուղթք, դեսպանութիւնք, խոստմունք եւ արգադիր մեծարանք. եւ ընկալաւ առ ՚ի նմանէ առհաւատչեայ ըղձացելումն՝ ոսկէկնիք վաւերական խոստագիր: Տեսաք, զի եւ յետ մահուան կայսրն ՚ի գալ որդւոյ նորին համանուան եւ առաջնորդի բանակին ՚ի Տարսոն, խորհեցան իշխանքն եւ եպիսկոպոսունքն, եւ ոչ համարեցան պատշաճ կամ ոչ բաւական զինքեանս՝ ՚ի թագաւորեցուցանել զնա, մինչ չեւ էր հրատարակեալ յաջորդ մեծի կայսերն վախճանելոյ, եւ ոչ քաջ ՚ի վերայ հասեալ նոցա խորհրդոց Լեւոնի, եւ հետեւանաց նորոյ գործոյն կամ ազդեցութեանն ՚ի վերայ իշխանաց արեւմտեայց՝ յայս կոյս ծովու եղելոց, այս ինքն յԱսորիս. միանգամայն զի եւ չէին նոցա բացայայտք՝ կրօնք եւ սովորութիւնք Հայոցս, եւ չափ զօրութեան Լեւոնի եւ հաստատութեանն. դարձեալ զի եւ ահն Սալահէտտինի տակաւին ՚ի վերայ կայր, եւ հոգ պատերազմի եւ պաշարման Պտղոմայիդայ, այլ եւ սրածութեան եւ նուագութեան գերմանական բանակին, եւ անագանումն գալստեան այլոց խաչակիր դաշնակցաց եւ զօրաց, հանդերձ այլովքն: Եւ այսպէս առ ժամն խափանէր թագադրութեանն գործ, այլ ոչ եւ խորհուրդ. եւ ակնկալուն երկայնամիտ՝ առաւել ընտրէր յապաղել՝ քան վարկպարագի իմն շքով կապել թագ. որով՝ ոչ այնքան պճնել զգլուխն կամէր, որքան բարձրացուցանել զայն յանուն ազգապետի Հայոց՝ ՚ի մեջ ազգաց եւ պետութեանց